ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 մայիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

67
(3276)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՐԵՎԷ ՈՒԺ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հայաստանում Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մնացել են հաշվված օրեր, սակայն նախընտրական դաշտում արձանագրվող հիմնական միտումներից մեկը, ըստ հրապարակվող սոցիոլոգիական ուսումնասիրությունների, շարունակում է մնալ ընտրական ակտիվության զգալի նվազումը:

Տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացվող եւ հրապարակային դարձած հարցումների ընդհանուր պատկերը, անկախ մեթոդաբանության տարբերություններից, պատվիրատուներից, աշխարհաքաղաքական կենտրոններից, հիմնականում արձանագրում է, որ ընտրողների զգալի հատվածը դեռեւս չի ցանկանում մասնակցել ընտրությանը: Միեւնույն ժամանակ, ըստ տարբեր կենտրոնների հարցումների արդյունքների, որեւէ առանձին քաղաքական ուժ այս փուլում չի կարող ինքնուրույն ձեւավորել կայուն խորհրդարանական մեծամասնություն:

Հունիսի 7-ից հետո կառավարության ձեւավորումը կարող է կախված լինել մի քանի հնարավոր սցենարներից՝

- դաշինքների ձեւավորում եւ հետընտրական քաղաքական միավորումներ,
- անցողիկ շեմը չհաղթահարած ուժերի ձայների վերաբաշխում բոնուսային համակարգի մեխանիզմների միջոցով,
- կամ ընտրությունների երկրորդ փուլ:

Այսինքն՝ ընտրությունների արդյունքները ավելի շատ կախված են հետընտրական զարգացումներից՝ ով ում հետ դաշինք կկազմի, որ ուժի ձայնը որքանով կավելանա չանցածների բոնուսների հաշվին: Այս ֆոնին ընտրությունների արդյունքներից հետո քաղաքական կայունության հարցը շարունակում է մնալ բաց եւ զգայուն օրակարգի առանցքային թեմաներից մեկը: Ի՞նչ սպասել հետընտրական Հայաստանում:



Երեկ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն 15 րոպեով Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում հյուրընկալվեց ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանին, նախաստորագրեցին ռազմավարական գործընկերության կանոնադրությունը, կարճ բացման ու փակման խոսք ասաց ու հեռացավ: Իշխանական գործիչները սա ներկայացնում են որպես դարի համագործակցություն, նոր նշաձող հայ-ամերիկյան հարաբերություններում՝ ընդգծելով, թե ԱՄՆ-ն ինչքան է կարեւորում ՀՀ-ի դերը: Եւ հատկապես այս այցի ֆոնին հանրային եւ քաղաքական քննարկումներում կրկին ակտիվացել է ԱՄՆ դիվանագիտական ներկայացվածության հարցը Հայաստանում: Մասնավորապես, եթե Հայաստանի համար ԱՄՆ-ն կարեւոր է, ինչո՞ւ Հայաստանում ներկայում չկա ԱՄՆ դեսպան: Հիշեցնենք, որ անցած տարի դեկտեմբերից ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինին հետ կանչեցին, նրան փոխարինում է փոխդեսպանը: Դեսպանատունը, իհարկե, ակտիվ աշխատում է, բայց պաշտոնական առաջին դեմք ԱՄՆ-ն չունի Հայաստանում:

Ազգային կրթության խորհուրդը վերջին ամիսներին պարբերաբար ահազանգում է, որ Հայաստանի մի շարք փոքր դպրոցներ կարող են փակվել կամ միավորվել՝ հղում անելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2023 թվականի սեպտեմբերի 11-ի N1790-Ա/2 հրամանին՝ https://escs.am/files/files/2023-09-11/447d04d2fcbe3042b6a0f639370f3279.pdf: Խորհուրդը հատկապես վերջին շաբաթներին իր ֆեյսբուքյան էջում հրապարակում է այն դպրոցների լուսանկարները, որոնք ընդգրկված են ցանկում՝ պնդելով, որ դրանցից շատերը գտնվում են բարվոք վիճակում եւ «ավերակ» չեն, ինչպես ներկայացնում է Նիկոլ Փաշինյանը: Ազգային կրթության խորհրդի պնդմամբ՝ խոսքը վերաբերում է 229-231 դպրոցների, որոնց գործունեությունը կարող է դադարեցվել, կամ որոնք կարող են միավորվել այլ կրթական հաստատությունների հետ: Ըստ խորհրդի հրապարակումների՝ դրա հետեւանքով շուրջ 7880 աշակերտ կարող է զրկվել սեփական համայնքում կրթություն ստանալու հնարավորությունից, շուրջ 2300 ուսուցիչ եւ 2400 օժանդակ աշխատող՝ աշխատանքից, իսկ ցանկում ընդգրկված դպրոցներից 55-ը սահմանամերձ բնակավայրերում են, որոնցից 27-ը՝ Սյունիքի մարզում: Խորհուրդը նաեւ նշում է, որ ամենախոցելի մարզերից են Սյունիքը, Շիրակը, Լոռին, Տավուշն ու Գեղարքունիքը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Ինչո՞ւ են Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքից հանվել քրեական ոստիկանության գլխավոր վարչության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների լուսանկարները: Նախկինում առկա էր լուսանկար, թե ով է, օրինակ, ՀՀ ՆԳՆ ՔՈԳՎ Երեւան քաղաքի վարչության պետ կամ, օրինակ, Արարատի մարզային վարչության պետ: Ասել է թե՝ անձամբ քաղաքացիները, մտնելով Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայք, դեմքով ճանաչում էին մարզային վարչության պետերին, իսկ ահա նախընտրական այս ժամանակահատվածում լուսանկարները կայքից հեռացվել են: Արդյոք այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հրապարակումներ եղան, թե ինչպես են Երեւան քաղաքի վարչական տարածքների, ինչպես նաեւ մարզային վարչության պետերը մասնակցում իշխանության հանրահավաքներին եւ անձամբ հետեւում քաղաքացիների եւ երկրի առաջին դեմքի հետ հանդիպմանը: Փորձեցինք ՆԳՆ-ից պաշտոնապես ստանալ մեկնաբանություն, որտեղից հայտնեցին. «Ձեր նշածը բացարձակ անհեթեթություն է, քանի որ ՆԳՆ ոստիկանության նոր, ժամանակակից սկզբունքներով եռալեզու կայքը համապատասխանում է ՀՀ հանրային ծառայությունների թվայնացման սկզբունքներին, գործում է ամպային տիրույթում: Նույն սկզբունքով են ստեղծվել, օրինակ, ՆԳՆ, ՓԾ, ՄՔԾ, ԲՏԱ, ՇՄՆ, ԱՆ, ՔԿԾ եւ այլ պետական այլ կառույցների կայքեր»:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի հունիսի 2-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆԱԽ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԳՏՆԵՆՔ ԻՆՔՆԵՐՍ ՄԵՔ»

ArmLur.am-ը զրուցեց «Միասնության թեւեր» կուսակցության պատգամավորության թեկնածու Դավիթ Անանյանի հետ:

- Պարոն Անանյան, ի՞նչ հիմնական ռիսկեր եք տեսնում՝ հատկապես իրավական եւ ժողովրդավարական առումով:

- Ռիսկերը բազմաթիվ են, սակայն մինչեւ իրավական եւ արդարադատության հետ կապված խնդիրների մասին խոսելը, այսօր ունենք ավելի մեծ վտանգ՝ պետականությունը պահպանելու հարցը: Իմ գնահատմամբ՝ եթե այս իշխանությունները վերարտադրվեն, լայն թափով կիրականացվեն Ադրբեջանի ռազմավարական ծրագրերը: Այդ ծրագրերի հիմքում այն գաղափարն է, որ Հայաստանը դե յուրե կարող է պահպանել իր պետական կարգավիճակը, բայց դե ֆակտո վերածվի խամաճիկային պետության: Հետեւաբար, նախ պետք է վերագտնենք ինքներս մեզ, վերականգնենք պետականության հիմքերը, վերահիմաստավորենք մեր գաղափարական եւ պատմական ուղին: Դրա համար անհրաժեշտ է ազատվել ներկայիս իշխանություններից, ձեւավորել ազգային իշխանություն եւ միայն դրանից հետո խոսել իրավական ռիսկերի ու արդարադատության մասին:

- Դուք ասում եք, որ առաջնային խնդիրը պետականության պահպանումն է: Ի՞նչ վտանգների առաջ է կանգնած պետականությունը, երբ իշխանությունը հայտարարում է, որ գնում է խաղաղության ճանապարհով:

- Իշխանությունն այսօր գործում է նախընտրական քարոզչության տրամաբանությամբ: Նրանք փորձում են հասարակությանը համոզել, թե ընդդիմությունը միայն վատատեսական կանխատեսումներ է անում, մինչդեռ իրենք խաղաղություն են ապահովում: Սակայն իրականում պետական քարոզարշավը սկսվել է դեռ 2024 թվականի հունվարից: Վերջին երկու սուկես տարիներին ամբողջ պետական համակարգը գտնվում է ընտրական տրամաբանության մեջ: Շատ ոլորտներում որոշումներ չեն կայացվում, որովհետեւ բոլորը սպասում են 2026 թվականի ընտրություններին: Օրինակ՝ ռազմարդյունաբերության ոլորտում նորմալ ֆինանսավորում չի իրականացվում, բյուջետային ծախսերը վերադասավորվում են ներքաղաքական վերարտադրության նպատակով: Կան բազմաթիվ ծախսային հոդվածներ, որոնք, մեղմ ասած, խնդրահարույց են:

- Ի՞նչ հիմքեր ունեք ասելու, որ իշխանությունների քաղաքականությունը կարող է վտանգել պետականությունը:

- Եթե ուզում ենք հասկանալ, թե ինչ է պատրաստվում անել այս իշխանությունը, պետք է հետեւենք Ադրբեջանի ղեկավարության հայտարարություններին: Ադրբեջանի նախագահը, պատգամավորները, խորհրդականները բաց տեքստով խոսում են Հայաստանի ապագայի մասին: Առաջին հերթին խոսքը վերաբերում է «Արեւմտյան Ադրբեջանի» հայեցակարգին եւ 300 հազար ադրբեջանցիների «վերաբնակեցման» գաղափարին: Այդ ուղղությամբ Ադրբեջանը մշտապես աշխատում է՝ պետական մակարդակով, հասարակական կազմակերպությունների միջոցով, միջազգային հարթակներում: Նրանք այդ հարցը ներկայացնում են որպես մարդու իրավունքների խնդիր՝ պնդելով, թե ադրբեջանցիների իրավունքները խախտվել են եւ պետք է վերականգնվեն:

- Ընդդիմությանը հաճախ մեղադրում են, թե հենց իրենք են ակտիվորեն շրջանառում այդ թեմաները:

- Դա իրականությանը չի համապատասխանում: Ես անձամբ վերլուծել եմ Ադրբեջանի պաշտոնական խոսույթը, եւ միայն այս տարվա ընթացքում առնվազն 27 անգամ այդ թեման բարձրացվել է ադրբեջանական պետական մակարդակով: Ադրբեջանը հետեւողականորեն միջազգային հանրության համար նախապատրաստում է այդ օրակարգը: Իսկ մենք պետք է հասկանանք՝ արդյոք Հայաստանի ներկայիս իշխանությունները կդիմադրեն այդ գործընթացներին, թե ոչ:

- Վերջին ամիսներին իշխանությունները քիչ են խոսում 4-րդ Հանրապետության կամ եկեղեցու բարեփոխումների մասին: Այդ թեմաները դո՞ւրս են եկել օրակարգից:

- Ո՛չ, այդ թեմաները օրակարգից դուրս չեն եկել: Պարզապես իշխանությունը հասկացել է, որ հանրության մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում այդ խոսույթին, եւ այն ժամանակավորապես հետին պլան է մղվել: Նույնը վերաբերում է եկեղեցու հարցին: Իրենց նախընտրական ծրագրում ներառված դրույթները, ըստ էության, հակասահմանադրական բնույթ ունեն: Բայց դա չի նշանակում, որ հրաժարվել են այդ մտադրություններից:

- Իշխանությունը պնդում է, որ եթե ժողովուրդը վերընտրի իրենց, ապա դա կլինի նաեւ ժողովրդի որոշումը եկեղեցական փոփոխությունների հարցում:

- Ո՛չ, եկեղեցու հարցը չի կարող որոշվել քաղաքական մեծամասնությամբ: Հայ առաքելական եկեղեցին 1700-ամյա ինստիտուցիոնալ կառույց է, որն ունի իր ներքին կանոնակարգն ու ինքնուրույն բարեփոխման մեխանիզմները: Մենք՝ որպես հավատավոր զավակներ, կարող ենք մեր տեսակետներն արտահայտել, բայց որդիական խոնարհությամբ: Եկեղեցու բարեփոխումները պետք է իրականացվեն հենց եկեղեցու ներսում:

- Իսկ ինչպե՞ս եք գնահատում 4-րդ Հանրապետության գաղափարը:

- Այդ գաղափարը, իմ կարծիքով, «աբսուրդ» է: Իրականում դա կապված է Սահմանադրության փոփոխության հետ: Իշխանությունը փորձում է գաղափարական հիմք ստեղծել սահմանադրական փոփոխությունների համար, մինչդեռ բոլորս հասկանում ենք, որ այդ փոփոխությունները մեծապես պայմանավորված են Ադրբեջանի պահանջներով: Խոսքը վերաբերում է թե՛ Սահմանադրության նախաբանին, թե՛ ազգային կարեւոր դրույթներին, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերի մասին հոդվածին: Այդ ամենը, ըստ էության, ազգային ինքնության վերափոխման փորձ է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՊՕՐԻՆԻ ՀՐԱՀԱՆԳՈՎ»

«Մայր Հայաստան» կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանի նամակը «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկից. «Հարգելի՛ հայրենակիցներ, քույրեր եւ եղբայրներ,

Նիկոլ Փաշինյանի ապօրինի հրահանգով իմ դեմ հարուցվել է քրեական գործ, որով նախատեսվում է ցմահ ազատազրկում: Պատերազմ եւ պարտություն բերած, հազարավոր զոհերի եւ վիրավորների պատճառ դարձած, Արցախի եւ Հայաստանի տարածքները հանձնած թուրք-ադրբեջանական օրակարգընպաստող Նիկոլ Փաշինյանն ինձ մեղադրում է պետական դավաճանության մեջ: Փաստորեն, դավաճանն ամենաբարձրն է գոռում՝ բռնե՛ք դավաճանին:

Նիկոլի համար «պետական դավաճան» են նրանք, ովքեր դեմ են իր իշխանությանը: Ինքը կցանկանար, որ բոլոր արցախցիները զոհված լինեին, ինչպես նաեւ զոհվեին կամ ցմահ ազատազրկման ենթարկվեին ՀՀ բոլոր այն քաղաքացիները, որոնք իրեն դեմ են: Այսինքն, Նիկոլ Փաշինյանը կուզենար, որ ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը զոհվեր կամ ցմահ ազատազրկվեր:

ՀՀ քաղաքացիները միասնական ջանքերով պետք է վռնդեն Նիկոլ Փաշինյանին՝ ակտիվորեն մասնակցելով ընտրություններին: Կոչ եմ անում հավաքական ընդդիմությանը գլխավոր՝ իշխանափոխության եւ հայկական իշխանության ձեւավորման հարցում լինել միասնական:

Միացի՛ր, որ փոխենք:

Անդրանիկ Թեւանյան

«Մայր Հայաստան» կուսակցության նախագահ

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակի 2-րդ համար

Հ.Գ. Օրենքով սահմանված կարգով Անդրանիկ Թեւանյանն ունի վստահված անձանց միջոցով հանրության հետ շփվելու իրավունք: Մինչեւ նախընտրական քարոզարշավի ավարտն Անդրանիկ Թեւանյանի ուղերձները կհրապարակվեն «Մայր Հայաստան» շարժման ֆեյսբուքյան էջով»:

ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի՝ Հայաստան այցի շրջանակում Հայաստանը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները նախաստորագրել են «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ միջազգային բարգավաճման» նախագծի վերաբերյալ ռազմավարական համագործակցության շրջանակային համաձայնագիրը: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, իսկ ամերիկյան կողմից՝ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն: Ստորագրման արարողությունից հետո Ռուբիոն նշել է, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարը եւ վարչապետը հարթում են նոր ճանապարհ դեպի ավելի անկախ Հայաստան՝ ընդգծելով, որ համագործակցության խորացումը կարեւոր նշանակություն ունի երկու երկրների համար: «Այս ամենից օգուտներ կստանան թե՛ հայերը, թե՛ ամերիկացիները»,- հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարը՝ խոսելով նոր ԱՄՆ-ՀՀ փաստաթղթի նշանակության մասին:

Ա. Վ.

ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԱՐՏՈՆՅԱԼ ԳՆԻՑ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկով հայտարարել է, որ եթե Հայաստանը որոշի դուրս գալ Եվրասիական տնտեսական միությունից եւ շարժվել դեպի Եվրամիություն, ապա կարող է զրկվել Ռուսաստանի հետ գործող արտոնյալ տնտեսական համագործակցությունից, այդ թվում՝ ռուսական գազի ցածր գնից: Պեսկովը լրագրողների հետ ճեպազրույցում նշել է, որ Ռուսաստանը շարունակում է մնալ էներգակիրների հուսալի եւ պատասխանատու մատակարար բոլոր երկրների, հատկապես իր դաշնակիցների եւ գործընկերների համար: Նրա խոսքով՝ Հայաստանի համար գործող գազի արտոնյալ գինը հնարավոր է միայն ինտեգրացիոն նույն համակարգում գտնվելու պայմաններում: «Այդպիսի ռեժիմը հնարավոր չէ այլ ինտեգրացիոն միավորումների մասնակիցների համար, խոսքը, իհարկե, Եվրամիության մասին է»,- ասել է Պեսկովը: ՌԴ նախագահի խոսնակը նաեւ հիշեցրել է, որ Հայաստանի ղեկավարությունն ինքն է բազմիցս հայտարարել ռուսական գազի «շատ գրավիչ» եւ արտոնյալ գնի մասին:

ՀԱԿԱՍՈՒՄ ԵՆ

ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն հայտարարել է, որ Հայաստանի ղեկավարության վերջին քայլերը, իր գնահատմամբ, հակասում են Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների ոգուն: Նա ընդգծել է, որ հայկական կողմը, ըստ իրեն, փորձում է պաշտպանություն գտնել այն ուժերից, որոնք Մոսկվան դիտարկում է որպես սպառնալիքի աղբյուր, եւ հավելել, որ դա Հայաստանի իշխանությունների ընտրությունն է ու պատասխանատվությունը երկրի ապագայի համար: Շոյգուն այս հայտարարությունները արել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ) Անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեի նիստում՝ նշելով, որ կազմակերպության գնահատմամբ հիմնական վտանգները գալիս են ՆԱՏՕ-ից եւ «քաղաքակիրթ Եվրոպայի» երկրներից: Նրա խոսքով՝ դաշինքը մտահոգված է արեւմտյան ուղղությամբ ՆԱՏՕ-ի ռազմական եւ հետախուզական ակտիվության աճով՝ զորավարժությունների թվի ավելացմամբ, ենթակառուցվածքների զարգացմամբ եւ ընդհանուր ռազմական ներուժի ուժեղացմամբ: Ռուսաստանցի պաշտոնյան նաեւ ընդգծել է, որ ՀԱՊԿ-ը փորձում է համարժեք արձագանքել այդ ռիսկերին եւ ձեռնարկում է քայլեր դրանք նվազեցնելու համար: Միեւնույն ժամանակ հիշեցվում է, որ Հայաստանը փաստացի սառեցրել է իր մասնակցությունը ՀԱՊԿ-ին եւ վերջին շրջանում չի մասնակցում կազմակերպության միջոցառումներին:

«ԱԼՅԱՆՍ»-Ը ԴՈՒՐՍ ԵԿԱՎ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչել «Ալյանս» կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը: Առաջիկա ընտրություններին 13 համարի քվեաթերթիկ չի լինելու: «Ալյանս» կուսակցությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ ԿԸՀ-ն հաստատել է կուսակցության ինքնաբացարկի դիմումը: Այսպիսով, «Ալյանս»-ը չի մասնակցի համապետական ընտրություններին: Կուսակցությունից պատճառների մասին մանրամասներ չհայտնեցին՝ նշելով, որ այդ հարցին կարող է պատասխանել միայն Տիգրան Ուրիխանյանը:

«Կուսակցությունը միանձնյա որոշում չի կայացրել եւ չէր էլ կարող կայացնել: Կուսակցության ղեկավար մարմինը վարչությունն է: Եղել է առաջարկ, այնուհետեւ՝ քննարկում, որի արդյունքում էլ ընդունվել է այս որոշումը: Որոշումը կայացրել է վարչությունը, որի անդամ է նաեւ Տիգրան Ուրիխանյանը: Սա ամբողջ վարչության, այսինքն՝ կուսակցության ղեկավար մարմնի որոշումն է»,- նշել են «Ալյանս»-ից: Հարցին՝ արդյոք ընտրություններին չմասնակցելով՝ որեւէ քաղաքական ուժի աջակցելու են, կուսակցությունից փոխանցեցին, որ վարչությունը հանդես կգա հայտարարությամբ: Հիշեցնենք, որ մայիսի 25-ին «Ալյանս» կուսակցությունը ԿԸՀ էր ներկայացրել ընտրական ցուցակի գրանցումը չեղարկելու վերաբերյալ դիմում:

Ն. Ա.

ՉԵՆ ԿԱՐՈՂ ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵԼ

ԱՊՀ-ում չեն կարող անուշադրության մատնել Երեւանի դիրքորոշումը՝ կապված եվրաինտեգրման ծրագրերի հետ: Այս մասին հայտարարել է ԱՊՀ գլխավոր քարտուղար Սերգեյ Լեբեդեւը՝ «Անկախ Պետությունների Համագործակցությանը 35 տարի. արդյունքներ, խնդիրներ, հեռանկարներ» թեմայով կլոր սեղանի ընթացքում: Նրա խոսքով՝ Ուկրաինան դեռեւս շարունակում է մնալ ԱՊՀ անդամ, իսկ Մոլդովայի դեպքում արդեն մեկնարկել է կազմակերպությունից դուրս գալու ընթացակարգը: Լեբեդեւը նշել է նաեւ, որ ԱՊՀ-ում ուշադրությամբ հետեւում են Հայաստանի դիրքորոշմանը՝ ԵՄ-ին անդամակցելու ծրագրերի վերաբերյալ, ընդգծելով, որ չնայած այդ հայտարարություններին՝ Հայաստանը շարունակում է մնալ ԱՊՀ, ՀԱՊԿ եւ ԵԱՏՄ անդամ եւ օգտվում է այդ կառույցների անդամակցության առավելություններից: Ռուսական TACC գործակալությունը ամփոփել է ԱՊՀ գլխավոր քարտուղարի հիմնական հայտարարությունները:

Ա. Վ.

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԸՀ-Ն ՄԵՐԺԵԼ Է

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 25-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրաժարակել է ուշագրավ որոշում, որով մերժել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդեւանյանի դիմում-հաղորդումը՝ Նիկոլ Փաշինյանի նախընտրական ելույթներում հնչած անթույլատրելի արտահայտությունների վերաբերյալ:

Խոսքը վերաբերում է ինչպես Կապանում մայիսի 9-ին Նիկոլ Փաշինյանի ունեցած ելույթին, այնպես էլ մայիսի 18-ին հրապարակված տեսանյութին, որտեղ, ըստ դիմումատուի, հնչել են ատելության, բռնության եւ քաղաքական հակառակորդներին թիրախավորող արտահայտություններ:

Արամ Վարդեւանյանն իր դիմումում նշել էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզչությունը «դուրս է եկել քաղաքական բանավեճի եւ կարծիքի ազատ արտահայտման իրավական սահմաններից»: Դիմումում մասնավորապես մեջբերվել է Փաշինյանի՝ Կապանում հնչեցրած ելույթը, որտեղ նա ընդդիմադիր ուժերին անվանել էր «պատերազմի եռագլուխ կուսակցություն»՝ նշելով. «Ի դեմս պատերազմի եռագլուխ կուսակցության՝ գործ ունենք նախորդ հանցավոր մաֆիայի հետ, որը դուրս ա եկել վերջին մարտի...»:

Վարդեւանյանը պնդել էր, որ այդ արտահայտությունները միտված են հանրային թշնամանք հրահրելուն եւ ընտրողների վրա հոգեբանական ազդեցություն գործադրելուն:

Դիմումում ընդգծվել էր, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ստեղծվել է միայն 2025 թվականին եւ չի կարող կապ ունենալ 2010 կամ 2013 թվականների քաղաքական կոալիցիաների հետ, ինչպես ներկայացվում է իշխանական քարոզչության շրջանակներում: Բացի այդ, Վարդեւանյանն անդրադարձել էր նաեւ Փաշինյանի մեկ այլ աղմկահարույց ելույթին, որտեղ վերջինս հայտարարել էր. «Չոքցնելու եմ սաղիդ, հատ-հատ մասկեքը կոխելու եմ համապատասխան տեղերդ... սատկացնելու եմ...»:

Ըստ դիմումատուի՝ նման բառապաշարը «օբյեկտիվորեն եւ ողջամտորեն կարող է ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք», ինչպես նաեւ՝ քաղաքական հակառակորդների նկատմամբ ատելության եւ թշնամանքի հրահրում:

Դիմումում նշվել էր նաեւ, որ վարչապետի կողմից կիրառվող հռետորաբանությունը կրում է շարունակական բնույթ եւ լրջորեն ազդում է ընտրողների ազատ քաղաքական կամքի ձեւավորման վրա:

Արամ Վարդեւանյանը ԿԸՀ-ից պահանջել էր.

- իրավական գնահատական տալ Նիկոլ Փաշինյանի արտահայտություններին,
- ուսումնասիրել վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումները,
- քննարկել ՔՊ-ի եւ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման հարցը,
- անհրաժեշտության դեպքում դիմել իրավապահ մարմիններին:

Մայիսի 25-ին կայացած նիստին մասնակցել են ինչպես Արամ Վարդեւանյանը, այնպես էլ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչ Սուրեն Գրիգորյանը: Վարդեւանյանը նիստի ընթացքում հայտարարել է, որ ԿԸՀ-ից չի ակնկալում «քարոզչության գրաքննություն», սակայն ակնկալում է քաղաքական պատասխանատվության գնահատական Նիկոլ Փաշինյանի կիրառած բառապաշարի համար:

Իսկ Սուրեն Գրիգորյանը հակադարձել է՝ նշելով, որ Նիկոլ Փաշինյանի խոսքերը եղել են «սուր եւ կոշտ քաղաքական գնահատականներ», ոչ թե բռնության կոչեր:

ԿԸՀ-ն, ուսումնասիրելով դիմումը, եկել է եզրակացության, որ թեեւ Փաշինյանի հռետորաբանությունը «զսպվածության եւ քաղաքական կոռեկտության շրջանակներում չէ», այնուամենայնիվ, չի պարունակում «բռնության կոչերի կամ հոգեբանական հարկադրանքի» հատկանիշներ:

Որոշման մեջ մասնավորապես նշվում է. «Դիմումով ներկայացված հանգամանքներում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չէ»:

ԿԸՀ-ն նաեւ մերժել է Վարդեւանյանի պահանջը՝ Նիկոլ Փաշինյանի եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ: Միեւնույն ժամանակ հանձնաժողովը հատուկ ընդգծել է, որ խոսքի ազատությունը բարձրագույն արժեք է, հատկապես ընտրական գործընթացների ժամանակ, սակայն այն «չի կարող մեկնաբանվել որպես բացարձակ իրավունք»:

ԿԸՀ որոշմամբ նաեւ արձանագրվել է, որ հնարավոր քրեական գնահատական պարունակող հայտարարությունները պետք է քննության առարկա դառնան իրավապահ մարմինների կողմից, ոչ թե ընտրական հանձնաժողովի:

Հիշեցնենք, որ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը Նիկոլ Փաշինյանի երկարամյա աշխատակիցն է եղել, մինչեւ պաշտոնի նշանակվելը եղել է ՔՊ-ական ու նրա անաչառությունը վաղուց կասկածի տակ է՝ արձանագրված անգամ միջազգային փաստաթղթերում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ Է ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ ՍՏԵՂԾԵԼ

Ռուսաստանը անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել Էբոլայի Բունդիբուգիո շտամի դեմ նոր պատվաստանյութ: Այս մասին РИА Новости-ին հայտնել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գենադի Օնիշչենկոն: Նրա խոսքով՝ ներկայում Աֆրիկայի մի շարք երկրներում տարածվող Բունդիբուգիո շտամի դեմ նախկինում ստեղծված պատվաստանյութերը բավարար արդյունավետ չեն լինի, սակայն ռուսական գիտությունն արդեն ունի նման պատվաստանյութերի մշակման փորձ: Օնիշչենկոն նշել է, որ անհրաժեշտ է միայն փոխել այն բաղադրիչը, որը պատասխանատու է վիրուսի նկատմամբ իմունային արձագանքի ձեւավորման համար: Ակադեմիկոսը որպես օրինակ բերել է COVID-19-ի դեմ պատվաստանյութի ստեղծումը՝ ընդգծելով, որ այն հիմնված էր MERS կորոնավիրուսի վերաբերյալ նախորդ գիտական փորձի վրա: Նա նաեւ զգուշացրել է, որ Ռուսաստանի առողջապահական համակարգը պետք է պատրաստ լինի Էբոլայի հնարավոր ներթափանցմանը՝ հատկապես ուշադրություն դարձնելով Աֆրիկայից վերադարձած քաղաքացիներին: Համաշխարհային առողջապահության կազմակերպությունը ավելի վաղ Էբոլայի բռնկումը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում եւ Ուգանդայում հայտարարել էր միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ:

ՁԳՈՒՇԱՑՐԵԼ ԵՆ ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իտալական L'AntiDiplomatico պարբերականը հայտարարել է, որ Կիեւին «ծանր ժամանակներ» են սպասվում՝ Ռուսաստանի ԱԳՆ-ի վերջին հայտարարությունից հետո: Պարբերականը գրում է, որ Մոսկվան ոչ միայն նախազգուշացնում է Սթարոբելսկի դեպքերի համար սպասվող պատասխան հարվածների մասին, այլեւ առաջին անգամ նման կոշտ տոնով դիմում է քաղաքացիական բնակչությանը: Հոդվածում նշվում է, որ Ռուսաստանը կոչ է արել օտարերկրյա քաղաքացիներին, դիվանագիտական առաքելությունների աշխատակիցներին եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին հնարավորինս արագ լքել Կիեւը, իսկ ուկրաինացիներին՝ հեռու մնալ ռազմական թիրախ համարվող օբյեկտներից: Պարբերականի գնահատմամբ՝ սա վկայում է, որ առաջիկայում կարող են լայնածավալ հարվածներ հասցվել Ուկրաինայի ռազմարդյունաբերական ենթակառուցվածքներին: Ավելի վաղ ՌԴ ԱԳՆ-ն հայտարարել էր Կիեւի ռազմական օբյեկտների դեմ համակարգային հարվածների մասին, իսկ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հեռախոսազրույցի ընթացքում ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյին կոչ էր արել ապահովել Կիեւում գտնվող դիվանագետների եւ օտարերկրյա քաղաքացիների տարհանումը: Ռուսական կողմը այս քայլերը կապում է մայիսի 22-ին Սթարոբելսկում տեղի ունեցած հարձակման հետ, որի հետեւանքով, ըստ Մոսկվայի, զոհվել էին ուսանողներ:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐ

ԴԱՏԱԽԱԶԸ ԴԱՏԱՐԱՆ Է ՀԱՆՁՆԵԼ

Դատախազը 2026 թվականի մայիսի 25-ին, հաստատված մեղադրական եզրակացությամբ, իրավասու դատարան է հանձնել Երեւան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/2 շենքի թիվ 296 հասցեում գտնվող՝ 1719.96 քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը եւ դրան հարակից 0.1030 հա չկառուցապատված հողամասը 2017 թվականին Հայաստանի Հանրապետությանը օտարելու գործընթացում թույլ տրված չարաշահման վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Քրեական վարույթով պարզվել է, որ Հ.Դ.-ն, 2014 թվականի մայիսի 5-ից մինչեւ 2018 թվականի ապրիլի 16-ը զբաղեցնելով ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը եւ հանդիսանալով բարձրաստիճան պաշտոնատար անձ, ապօրինի մասնակցել է ձեռնարկատիրական գործունեությանը՝ հովանավորելով իրեն եւ Վ.Պ.-ին պատկանող ու իրենց կողմից փաստացի ղեկավարվող «ԴԻ Ընդ Էյջ Գրուպ» ՍՊ ընկերությանը: Մասնավորապես Հ.Դ.-ն, մի խումբ անձանց հետ հանցակցությամբ, խաբեության եղանակով խուսափել է Հայաստանի Հանրապետության նկատմամբ «ԴԻ Ընդ Էյջ Գրուպ» ՍՊ ընկերության ունեցած վարկային պարտավորության մասնակի մարումից՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 529 միլիոն 533 հազար դրամի վնաս, ինչպես նաեւ դրդել է պաշտոնատար անձանց՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն: Քրեական վարույթով հիմնավորվել է նաեւ, որ Ա.Ս.-ն, 2011 թվականի հունիսի 22-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 12-ը զբաղեցնելով ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը, Հ.Դ.-ի հետ ունեցած հարաբերություններով պայմանավորված, վերջինիս օգտին գործողություններ կատարելու շահադիտական դրդումներով եւ խմբային շահերից ելնելով, իր իշխանական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին՝ պետության համար անզգուշությամբ առաջացնելով 529 միլիոն 533 հազար դրամի չափով ծանր հետեւանքներ:

Ա.Ա.-ն, 2017 թվականին զբաղեցնելով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտոնը, ՀՀ կառավարության նիստի ընթացքում չի ներկայացրել առարկություններ եւ համաձայնություն է տվել պետական կարիքների համար ձեռք բերել այնպիսի գույք, որը չի համապատասխանել սահմանված չափորոշիչներին՝ այդպիսով նպաստելով «ԴԻ Ընդ Էյջ Գրուպ» ՍՊ ընկերության գույքային դրության բարելավմանը: Վերոնշյալ գործողությունների հետեւանքով պետությունը զրկվել է «ԴԻ Ընդ Էյջ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրամադրված 10 միլիոն ԱՄՆ դոլար բյուջետային վարկից ընդհանուր 529 միլիոն 533 հազար դրամը ստանալու հնարավորությունից:

2026թ. ապրիլի 7-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել՝ Հ.Դ.-ի նկատմամբ՝ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, խարդախության եւ պաշտոնեական լիազորությունների չարաշահմանը դրդելու համար, Ա.Ս.-ի եւ Ա.Ա.-ի նկատմամբ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Երկու այլ անձի՝ Ա.Կ.-ի եւ Ա. Թ.-ի նկատմամբ, դատախազը հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ խարդախություն կատարելուն օժանդակելու, փաստաթուղթ կեղծելու եւ պաշտոնեական լիազորությունների չարաշահմանն օժանդակելու համար: Դատախազը 2026թ. մայիսի 25-ին քրեական վարույթի նյութերը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնել է Հակակոռուպցիոն դատարան՝ ըստ էության քննության:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՕՏԱՐԵԼ Է 9 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ

Քանաքեռ-Զեյթունի նախկին թաղապետը 113 մլն արժեքով գույքն օտարել է 9 մլն դրամով. քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է մեկ անձի մասով: Այս մասին հայտնում է ՀՀ քննչական կոմիտեն:

«Ռ.Ս.-ն 1997-2005 թվականները զբաղեցնելով Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թաղապետի պաշտոնը, ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ՝ Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքին սեփականության իրավունքով հանձնված՝ Զաքարիա Սարկավագի փողոցի 50 հասցեում գտնվող՝ 113 մլն 900 հզր ՀՀ դրամ շուկայական արժեքով, 16-րդ պոլիկլինիկայի 2370 քմ մակերեսով անավարտ շենքը 2003 թվականի մայիսի 3-ին կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա օտարել է 9 մլն 218 հզր 600 ՀՀ դրամով: Արդյունքում, էական վնաս է պատճառվել համայնքում բնակարանային հաշվառման վերցված կարիքավոր ընտանիքների իրավունքներին եւ օրինական շահերին՝ վերջիններիս զրկելով բնակարաններից, իսկ Երեւանի քաղաքապետարանը զրկվել է Հայաստանի խուլերի միավորման բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին սահմանված կարգով հատկացնելու համար 10%-ը տնօրինելու հնարավորությունից: Ռ.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս):

Ռ.Ս.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին»,- ասվում է ՔԿ հաղորդագրության մեջ:

ՀՐԴԵՀ ԷԼԻՏԱՐ ՇԵՆՔՈՒՄ

Մայիսի 26-ին խոշոր հրդեհ է բռնկվել Երեւանում: Ժամը 12:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց 44/4 էլիտար կառուցվող բազմահարկ շենքում կրակ եւ ծուխ են նկատվում: Shamshyan.com-ի տեղեկություններով՝ օպերատիվորեն ժամանել են Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատներից 8 մարտական հաշվարկ եւ 1 ավտոսանդուղք: Մինչ հրշեջների ժամանումը՝ չբնակեցված էլիտար շենքի հարկերում առաջացած կրակի դեմ պայքարել են աշխատակիցները, ապա ժամանած հրշեջներին շնորհիվ կանխվել է կրակի տարածումը: Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար տուժածներ չկան: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ կառուցապատողը «Օրդ Դեվելո» ընկերությունն է:

ԼՈՒՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Ժողովրդավարական Հայաստանում Նիկոլ Փաշինյան իշխանության կողմից ընդդիմադիր գործիչներին, պատգամավորի թեկնածուներին ճնշելու գործընթացը մեծ թափ է հավաքում: ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ եւս մեկ ընդդիմադիր պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու գործընթաց է մեկնարկել: Խոսքը «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Արմեն Վլադիմիրի Ստեփանյանի մասին է:

ArmLur.am-ը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանի նախկին աշխատակից Վահագն Հովակիմյանի գլխավորությամբ ԿԸՀ-ն Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով որոշել է բավարարել դատախազության միջնորդությունը եւ համաձայնություն տալ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Արմեն Վլադիմիրի Ստեփանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, ապա ազատությունից զրկելու վերաբերյալ: Նշենք, որ սա արդեն երկրորդ աղմկահարույց դեպքն է վերջին օրերին: Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ընտրական հանցագործության գործով հանրային քրեական հետապնդում է հարուցել «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակի 10-րդ համարի թեկնածու Հայկ Սուքիասյանի նկատմամբ: Ստեղծված իրավիճակը նոր լարվածություն է մտցրել նախընտրական գործընթացում՝ հատկապես ընդդիմադիր դաշտում, որտեղ արդեն խոսում են քաղաքական հետապնդումների եւ ընտրական գործընթացների վրա ազդեցության փորձերի մասին: Թե կոնկրետ ինչ մեղադրանքներով են ընդդիմադիր թեկնածուներին հետապնդում, պաշտոնապես դեռ չեն հաղորդում: ArmLur.am-ը կպարզի եւ կհրապարակի:

Ք. Մ.

ԻՆՉ Է ՀԱՅՏՆԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Արցախի նախկին նախագահ Սամվել Շահրամանյանի հեռախոսն առգրավվել է: Այս մասին հայտնել է նրա փաստաբան Ռոման Երիցյանը: Փաստաբանի խոսքով՝ Շահրամանյանին մայիսի 15-ին հրավիրել են քննչական կոմիտե՝ հարցաքննության, որտեղ ներկայացվել է հեռախոսի առգրավման որոշումը: ՀՀ զինվորական քննչական գլխավոր վարչության տվյալներով՝ քննությունը վերաբերում է 2023 թվականի սեպտեմբերի 24-ին Արցախում տեղի ունեցած բենզալցակայանի պայթյունին: Սակայն Երիցյանը նշել է, որ առգրավված հեռախոսը 2025 թվականի արտադրության է, եւ դա հարցեր է առաջացնում դրա առնչության վերաբերյալ: Փաստաբանը նաեւ հայտնել է, որ վերջին շաբաթներին հարյուրավոր արցախցիներ ծանուցումներ են ստացել ծառայողական բնակարաններն ազատելու մասին: Նրանց թվում են Արցախի նախկին զինկոմիսար, Արցախի նախագահի խորհրդական Ֆելիքս Գաբրիելյանը եւ ԱՀ պաշտպանության նախկին նախարար Միքայել Արզումանյանը: Իշխանությունները, ըստ նրա, պնդում են, թե բնակարանները տրամադրվել են ոչ իրավաչափ ձեւով: Նշենք, որ այս պահին Միքայել Արզումանյանը գտնվում է տնային կալանքում: Իսկ Ֆելիքս Գաբրիելյանը Միքայել Արզումանյանի քրոջ ամուսինն է:

Երիցյանն անդրադարձել է նաեւ Երեւանի Նաիրի Զարյան 17Ա հասցեում գտնվող Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքին՝նշելով, որ շենքի սեփականազրկման գործով դատական վճիռը պետք է հրապարակվեր մայիսի 22-ին, սակայն առ այսօր վճիռը հրապարակված չէ:

Ն. Ա.

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ մայիսի 22-ից 25-ը բացահայտվել է փաստաթղթի կեղծիքի 9 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՓԱԿՎԵԼՈՒ ԵՆ



«Նոյեմբերյան» հայրենակցական միության նախագահ, տնտեսագիտության թեկնածու Հայկ Ղազարյանը հայտնում է, որ դպրոցների կառուցմամբ հիպարտացող այս իշխանությունները նախատեսում են այս տարի 229 գյուղական դպրոց լուծարել, որից 55-ը՝ սահմանամերձ գյուղերում: Ադրբեջանին սահմանամերձ փոքր գյուղերում հանրակրթական դպրոցի փակումը կարող է հանգեցնել այդ գյուղի բնակիչների արտագաղթի, բնակավայրի վերացման: Փակվելիք այդ 229 հանրակրթական դպրոցներից 4-ը Նոյեմբերյան համայնքում են: Դրանք են Բարեկամավանի, Ջուջեւանի, Լճկաձորի եւ Դեղձավանի դպրոցները:

ԻՆՉՈ՞Ւ Է «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱՅԻՆ» ԴԱՏԻ ՏՎԵԼ

Ալեքսան Ներսիսյանը 2026թ. ապրիլի 22-ին սեփականության իրավունքի խախտումը վերացնելուն պարտավորեցնելու պահանջով քաղաքացիական հայց է ներկայացրել ընդդեմ Երեւան քաղաքի Արգիշտի փողոց 4/1 հասցեում գործող «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի: Ա. Ներսիսյանը մուծել է 20 հազար դրամ պետական տուրք: Քաղաքացիական գործը մակագրվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նանա Դալլաքյանին: Սույն քաղաքացիական հայցով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում նիստ դեռ նշանակված չէ: Ա.Ներսիսյանը Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղի 31-ամյա բնակիչ է, մասնագիտությամբ տնտեսագետ: Նա Աղավնավանքի նախկին գյուղապետ, ներկայումս գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Վարդուշ Ներսիսյանի որդին է: Աղավնավանքից տեղեկացա, թե որն է քաղաքացիական հայց ներկայացնելու պատճառը: Ալեքսան Ներսիսյանին պատկանող հողամասով է ձգվում «Վիվա Արմենիա» ընկերության մալուխը, Ալեքսանը ցանկանում է իր հողամասի մի մասը վաճառել, սակայն պոտենցիալ գնորդներն ասում են, որ մալուխը գործարքին խանգարող հանգամանք է: Զանգահարեցի Ա. Ներսիսյանին: Նա ասաց, որ այդ գործով ինքը փաստաբան ունի, հայցի շահերից ելնելով՝ չցանկացավ մանրամասներ հայտնել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՔՈՒ

ՇԻՆԾՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ երեկ տեղի էր ունենալու Արցախի նախկին ռազմաքաղաքական ղեկավարների գործով դատավճիռների բողոքարկման դատավարությունը:

Ըստ ադրբեջանական կողմի՝ վարույթ են ընդունվել Արցախի նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանի, Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, ինչպես նաեւ Դավիթ Իշխանյանի, Դավիթ Բաբայանի, Լեւոն Մնացականյանի եւ մյուսների վերաբերյալ դատավճիռների դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները: Հիշեցնենք, որ ադրբեջանական կողմից նրանց մեղադրանքներ են առաջադրվել այնպիսի շինծու հոդվածներով, ինչպիսիք են «խաղաղության եւ մարդկության դեմ հանցագործությունների», «ահաբեկչության», «ագրեսիվ պատերազմի վարման», ինչպես նաեւ այլ ծանր հոդվածներով:

Նշվում է, որ գործը քննվելու է Բաքվի վերաքննիչ դատարանում՝ դատավոր Էլմար Ռահիմովի նախագահությամբ: Հիշեցնենք, որ Բաքվի ռազմական դատարանի նախորդ վճռով Արայիկ Հարությունյանը, Լեւոն Մնացականյանը, Դավիթ Մանուկյանը, Դավիթ Իշխանյանը եւ Դավիթ Բաբայանը դատապարտվել էին ցմահ ազատազրկման, իսկ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը՝ 20 տարվա ազատազրկման: Նույն գործով Մադաթ Բաբայանը եւ Մելիքսեթ Փաշայանը դատապարտվել էին 19 տարվա, Գարիկ Մարտիրոսյանը՝ 18 տարվա, Դավիթ Ալլահվերդյանն ու Լեւոն Բալայանը՝ 16 տարվա, իսկ Վասիլի Բեգլարյանը, Գուրգեն Ստեփանյանը եւ Էրիկ Ղազարյանը՝ 15 տարվա ազատազրկման:

Հիշեցնենք, որ ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի պաշտպան, փաստաբան Սիրանուշ Սահակյանը հայտնել էր, որ տեղեկություն կա՝ մայիսի 26-ին Բաքվում տեղի կունենան որոշ հայ գերիների վերաքննիչ բողոքների հարցով դատական լսումները. «Բաքվում պահվող 15 գերիներին վերաբերող դատավճիռներ են բողոքարկվել, բայց քանի որ գործել են հանրային պաշտպանները, որոնց նկատմամբ պատշաճ վստահություն չկա, տեղյակ չենք, թե ում բողոքն է վարույթ ընդունվել, բայց կարծում ենք, որ դատավարության սկսվելուց հետո կտեղեկանանք»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է

Մեկնարկում է 2026-2027 ուսումնական տարում առաջին դասարան հաճախող երեխաների էլեկտրոնային հայտագրումը՝ երեք փուլով: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍՆ-ից:

Փուլ առաջին

Հունիսի 8-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ հունիսի 21-ը՝ ժամը 24:00-ը ներառյալ, հայտագրումը բաց կլինի արտոնություններ ունեցող երեխաների համար (արտոնությունները տեսանելի կլինեն համակարգում): Արտոնություններից կարող են օգտվել.

տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաները,

տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաները,

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող եւ ներքոնշյալ խմբերի երեխաները՝

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների երեխաները կամ «Պետական նպաստների մասին» օրենքով եւ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող եւ ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաները,

խնամակալության տակ գտնվող երեխաները,

հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաները:

Արտոնությունից կարող են օգտվել նաեւ տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաները, եթե ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) մինչեւ առաջին դասարան հայտագրման մեկնարկի օրը՝ հունիսի 8-ը, ԿԳՄՍՆ էլեկտրոնային հասցեին (secretariat@escs.am) ուղարկել է դիմում եւ համապատասխան տեղեկանքներ՝ ըստ սահմանված կարգի: Դիմումը եւ տեղեկանքը ստանալուց հետո նախարարությունը, ստուգելով ներկայացված տեղեկանքի հավաստիությունը, առաջնահերթությունից օգտվելու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում համապատասխան որոշումն ուղարկում է ԿՏԱԿ, չբավարարելու դեպքում՝ պատասխանը գրավոր տրամադրում դիմումատուին: ԿՏԱԿ-ը վերը նշված ժամկետում՝ հունիսի 8-21-ը ներառյալ, իրականացնում է սովորողի հայտագրումը՝ հիմք ընդունելով ԿԳՄՍՆ որոշումը: Նշված արտոնությունները վերաբերում են ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ հաճախող երեխաներին:

Փուլ երկրորդ

Հունիսի 23-ին՝ ժամը 09:00-ից, առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) համար: Հայտագրում կիրականացվի նաեւ այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը պատկանում է նշված խմբերից որեւէ մեկին, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է: Համակարգը բաց է նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար, որոնց ծնողները ցանկանում են երեխաներին հայտագրել հայերենով ուսուցմամբ դասարաններում:

Փուլ երրորդ

Հունիսի 30-ին՝ ժամը 09:00-ից, հայտագրում կիրականացվի ռուսերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, որը նախատեսված է օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) երեխաների համար: Այս կարգավորումը գործում է նաեւ այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, մյուսը՝ ոչ, ինչպես նաեւ ծնողներից մեկն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ է, եւ երեխան պետք է հաճախի ռուսերենով ուսուցմամբ դասարան՝ ծնողների ընտրությամբ:

Երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի քանակից:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Հայտագրումն իրականացվելու է առցանց՝ երկու քայլով:

Քայլ 1 - Մուտք գործեք https://my.emis.am/ հարթակ եւ բացեք օգտատիրոջ էջը: Մանրամասն քայլերը ներկայացված են «Գրանցում my.emis.am» տեսաուղեցույցում:

Քայլ 2 - Եթե արդեն անցել եք նույնականացում եւ https://my.emis.am/ հարթակում ունեք էջ, ապա սպասեք հայտագրման մեկնարկին, որպեսզի ընտրեք դպրոցը: Հայտագրման քայլերը ներկայացված են «Առաջին դասարանի հայտագրում» տեսաուղեցույցում:

Հայտագրվելու, դպրոցի տնօրենին դիմում ներկայացնելու, ինչպես նաեւ դպրոցի հետ պայմանագիր կնքելու ողջ գործընթացը թվայնացված է եւ հնարավոր է իրականացնել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ծնողի կողմից ստեղծված էջով:

Հաշվի առնելով, որ գրանցումը ժամանակատար է, խորհուրդ ենք տալիս մինչեւ հայտագրման մեկնարկը գրանցվել եւ համակարգում անցնել նույնականացում, որից հետո հնարավոր կլինի երեխային հայտագրել նախընտրելի դպրոցում:

● *Անցած 3 օրում գրանցվել է 27 ավտովթար. 50 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԼՔԻ

Հայաստանի ազգային հավաքականի եւ «Կրասնոդարի» ավագ էդուարդ Սպերցյանը նոր հայտարարություն է արել ռուսական ակումբում իր ապագայի վերաբերյալ, հայտնում է armsport-ը: Ավելի վաղ ֆուտբոլիստը չէր բացառել, որ հնարավոր է՝ արդեն անցկացրել է իր վերջին հանդիպումը «ցուլերի» կազմում՝ մասնակցելով Ռուսաստանի գավաթի խաղարկության սուպերեզրափակիչում Մոսկվայի «Սպարտակի» դեմ կայացած խաղին (1-1, 4-3 11-մ.): «Չեմ հերքի, որ հեռանալու հավանականությունը կա: Կտեսնենք: Ես տրամադրված եմ ինչպես տեղափոխվելուն, այնպես էլ այստեղ մնալուն եւ պայքարը շարունակելուն, եթե նոր առաջարկներ չլինեն»,- Սպերցյանի խոսքերն է մեջբերում Sport-Express-ը: Հիշեցնենք, որ 2025/26 մրցաշրջանում Սպերցյանն անցկացրած 42 հանդիպումներում դարձել է 14 գոլի եւ 18 արդյունավետ փոխանցման հեղինակ: Հայաստանի հավաքականի առաջատարի տրանսֆերային արժեքը գնահատվում է 25 միլիոն եվրո, իսկ նրա գործող պայմանագրի ժամկետը ներկայիս ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2029 թվականի հունիսի 30-ը:

ՎՍՏԱՀ Է

Լոնդոնի «Արսենալի» գլխավոր մարզիչ Միկել Արտետան լիովին վստահ է իր թիմի ուժերին, գրում է armsport-ը: Իսպանացի մասնագետի համոզմամբ՝ «զինագործները» կկարողանան հաղթել գործող գավաթակիր ՊՍԺ-ին Չեմպիոնների լիգայի առաջիկա եզրափակիչում:

«Շաբաթ օրը մենք կհռչակվենք Եվրոպայի չեմպիոն»,- Արտետայի խոսքերն է մեջբերում The Touchline-ը:

Հիշեցնենք, որ նախորդ շաբաթ «Արսենալը» հռչակվել էր Անգլիայի չեմպիոն՝ 2004 թվականից ի վեր առաջին անգամ նվաճելով Պրեմիեր լիգայի տիտղոսը:

Չեմպիոնների լիգայի եզրափակիչ հանդիպումը կկայանա մայիսի 30-ին՝ շաբաթ օրը, Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում: Բաղձալի գավաթի համար վճռորոշ պայքարը կմեկնարկի Երեւանի ժամանակով 20:00-ին:

Հիշեցնենք, որ փարիզյան գրանդը Չեմպիոնների լիգայի գործող գավաթակիրն է: Լուիս Էնրիկեի գլխավորած թիմը նախորդ մրցաշրջանի եզրափակիչում առաջին անգամ նվաճեց «ականջավոր» գավաթը՝ եզրափակիչում 5-0 հաշվով հաղթելով Միլանի «Ինտերին»:

ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ

ԱՆԾՈՒԽ ԱՊԱԳԱՅԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Երեւան, Հայաստան - 26.05.2026 - Ֆիլիպ Մորրիս Արմենիան՝ հեռեւորդական լինելով հնարավորինս արագ դադարեցնելու սիգարետի վաճառքը, իր անծուխ արտադրանքի պորտֆելին ավելացրել է նիկոտինային բարձիկները՝ նախատեսված չափահասների համար, ովքեր հակառակ դեպքում կշարունակեին ծխել: Նիկոտինային բարձիկները չեն պարունակում ծխախոտի տերեւ, սակայն պարունակում է նիկոտին եւ համային հավելումներ՝ համակցված սննդային այլ բաղադրիչների հետ:

Ֆիլիպ Մորրիս Ինթերնեյշնլի (ՖՄԻ) դիրքորոշումն է. լավագույն քայլը, որ ծխողները կարող են անել իրենց առողջության համար, նիկոտինից եւ ծխախոտային արտադրանքներից ամբողջությամբ հրաժարվելն է: Սակայն տվյալները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տարի տասը ծխողներից առավելագույնը մեկն է կարողանում հաջողությամբ թողնել ծխելը: Այն չափահասների համար, ովքեր հակառակ դեպքում կշարունակեին ծխել, ՖՄԻ-ն մշակել է գիտականորեն հիմնավորված անծուխ արտադրանքների շարք, որոնք սիգարետի համեմատաբար ավելի լավ այլընտրանք են:

Շվեդական Swedish Match ընկերության կողմից մշակված նիկոտինային բարձիկները ճափահաս նիկոտին օգտագործողների համար նիկոտինը մատակարարելու նոր եղանակ են: Նիկոտինային բարձիկները սիգարետի համեմատ արտազատում են 99%-ով պակաս վնասակար[1] քիմիական նյութեր: Այն պարունակում է նիկոտին, համային հավելումներ եւ այլ սննդային կարգի բաղադրիչներ եւ չի պարունակում ծխախոտ: Նիկոտինային բարձիկը օգտագործվում է բերանի միջոցով՝ բարձիկը տեղադրելով լնդի եւ այտի կամ շրթունքի միջեւ մոտավորապես 30 րոպե: Ֆիլիպ Մորրիս Արմենիայի Գլխավոր կառավարիչ Արթուր Ռիեզնիկովը նշում է. «2022 թվականին ՖՄԻ-ն ձեռք բերեց Swedish Match ընկերությունը՝բերանի միջոցով նիկոտինային արտադրանքների գլոբալ առաջատարին, որն ունի Շվեդիայում սիգարետի սպառումը սնուսով եւ նիկոտինային բարձիկներով փոխարինելու տասնամյակների փորձ: Այսօր Շվեդիան առաջատարն է Եվրոպայում ծխելու ամենացածր մակարդակով՝ 1980 թվականին մոտ 35%-ից մինչեւ 5.3% այսօր, ինչը շատ մոտ է ԵՄ-ի՝ ծխից ազատ երկրի 5% նպատակին:

Բացի այդ, հանրային առողջապահական տվյալները ցույց են տալիս, որ ծխելու տարածվածության նվազումը Շվեդիայում կապված է ծխելու հետ կապված հիվանդությունների եւ դրանց հետեւանքով մահացության զգալիորեն ավելի ցածր մակարդակի հետ՝ հատկապես շվեդ տղամարդկանց շրջանում՝համեմատած Եվրոպական միության մյուս երկրների հետ: Ուրախ ենք այդ փորձն ու գիտելիքը բերել Հայաստան»:

Ֆիլիպ Մորրիս Ինթերնեյշնլ. գլոբալ առաջատար դեպի անծուխ ապագա

Ֆիլիպ Մորրիս Ինթերնեյշնլն սպառողական ապրանքներ արտադրող առաջատար միջազգային ընկերություն է, որն ակտիվորեն աշխատում է անծուխ ապագա կառուցելու ուղղությամբ եւ երկարաժամկետ զարգացնում իր պորտֆելը՝ ներառելով նաեւ ծխախոտի եւ նիկոտինի ոլորտից դուրս արտադրանքներ: Ընկերության ներկայիս պորտֆելը հիմնականում ներառում է սիգարետ եւ անծուխ արտադրանքներ՝ այդ թվում տաքացնող, բայց այրում չառաջացնող նիկոտինային բարձիկներ եւ վեյփեր: ՖՄԻ-ի անծուխ արտադրանքը վաճառվում է ավելի քան 105 շուկաներում, եւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ ՖՄԻ-ի գնահատականների, դրանք օգտագործում են ավելի քան 43 միլիոն չափահաս սպառողներ ամբողջ աշխարհում, որոնցից շատերը ամբողջությամբ հրաժարվել են սիգարետներից կամ զգալիորեն նվազեցրել դրանց օգտագործումը: 2025 թվականին PMI-ի ընդհանուր մաքուր եկամուտների 41.5%-ը կազմել է անծուխ բիզնեսը: 2008 թվականից ի վեր ՖՄԻ-ն ավելի քան 16 միլիարդ դոլար է ներդրել նորարարական անծուխ արտադրանքների մշակման, գիտական հիմնավորման եւ առեւտրայնացման համար՝ նախատեսված չափահասների համար, որոնք հակառակ դեպքում կշարունակեին ծխել: Այս ներդրումները ներառում են նաեւ համաշխարհային մակարդակի գիտական գնահատման կարողությունների զարգացում՝ նախակլինիկական համակարգային տոքսիկոլոգիայի, կլինիկական եւ վարքագծային հետազոտությունների, ինչպես նաեւ հետշուկայական ուսումնասիրությունների ոլորտներում:

Գիտական մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո ԱՄՆ Սննդամթերքի եւ դեղորայքի վերահսկողության վարչությունը (FDA) թույլատրել է Swedish Match-ի General snus-ի եւ ZYN նիկոտինային բարձիկների, ինչպես նաեւ ՖՄԻ-ի ծխախոտի տաքացման սարքերի եւ դրանց սպառողական ապրանքների որոշ տարբերակների շուկայավարումը՝ իրենց կատեգորիաներում առաջին նման թույլտվություններով: IQOS սարքերի որոշ տարբերակներ եւ General snus-ը FDA-ի կողմից ստացել են նաեւ «Մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանք» թույլտվությունները:

Կենսական գիտությունների ոլորտում ամուր հիմքի եւ փորձի շնորհիվ ՖՄԻ-ն ունի նաեւ երկարաժամկետ նպատակ ընդլայնվելու առողջության եւ բարեկեցության ոլորտներում:

«ՖՄԻ», «մենք», «մեր» եւ «մեզ» ձեւակերպումները վերաբերում են Philip Morris International Inc.-ին եւ նրա դուստր ընկերություններին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.pmi.com եւ www.pmiscience.com:

[1] Կարեւոր տեղեկատվություն. սա պարտադիր չի նշանակում ռիսկի 99% նվազում: Նիկոտինային բարձիկները լիովին ռիսկից զերծ արտադրանք չէ: «99%-ով պակաս» ցուցանիշը ներկայացնում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սիգարետի ծխում առկա 9 վնասակար քիմիական նյութերի մակարդակների խորհուրդ տրվող միջին նվազումը (նիկոտինը ներառված չէ): Համեմատությունը կատարվել է ստանդարտ սիգարետի ծխի եւ ZYN բարձիկից արտազատվող նյութերի միջեւ:

ԿԻՎՈՒՆ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Իտալիայի առաջնության վերջին՝ 38-րդ տուրի «Բոլոնիայի» դեմ խաղից (3-3) հետո «Ինտերի» գլխավոր մարզիչ Քրիստիան Կիվուն մեկնաբանել է թիմի հայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի ապագայի շուրջ ստեղծված իրավիճակը, գրում է armsport-ը: Ռումինացի մասնագետն առանձնահատուկ ընդգծել է փորձառու ֆուտբոլիստի նվիրվածությունն ու մասնագիտական բարձր պրոֆեսիոնալիզմը:

Անդրադառնալով Մխիթարյանին ու ապագայի հնարավոր զարգացումներին՝ Կիվուն արել է հետեւյալ հայտարարությունը. «Մխիթարյանի պես ֆուտբոլիստը շատ բան է նշանակում թիմի համար՝ իր պրոֆեսիոնալիզմի, կենտրոնացվածության եւ գործի հանդեպ վերաբերմունքի շնորհիվ: Այն ֆուտբոլիստների համար, որոնց պայմանագրի ժամկետը մոտենում է ավարտին, ստեղծված իրավիճակը հեշտ չէ, հատկապես՝նման տարիքում, բայց նրանք ներդրեցին իրենց ողջ ուժերը եւ լիովին նվիրվեցին թիմին: Ակումբի ղեկավարության հետ համատեղ մենք դեռ չենք զրուցել նրա հետ, ուստի հաջորդ շաբաթ նման հնարավորություն կունենանք»,- Կիվուի խոսքերն է մեջբերում Football-Italia-ն:

Հիշեցնենք, որ Հենրիխ Մխիթարյանի գործող պայմանագիրն «Ինտերի» հետ նախատեսված է մինչեւ ընթացիկ տարվա հունիսի 30-ը: Փաստացի, պաշտոնական համաձայնագրի ավարտին մնացել է ընդամենը մեկ ամսից մի փոքր ավելի ժամանակ, սակայն կողմերը դեռեւս նոր փաստաթուղթ չեն ստորագրել:

Այս պահի դրությամբ Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագի ապագան շարունակում է մնալ անորոշ, եւ սպասվում է, որ հաջորդ շաբաթ նախատեսված հանդիպումը վերջնական հստակություն կմտցնի նրա կարգավիճակի հարցում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐ

ԸՆՏԱՆԻՔԻ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՄՏԵՐԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Ամերիկացի հայտնի երգչուհի եւ դերասանուհի Ջենիֆեր Լոպեսը Մեմորիալ օրը նշել է իր ընտանիքի եւ մտերիմ ընկերների շրջապատում՝ վայելելով արեւոտ հանգիստը Լոս Անջելեսում: 56-ամյա աստղը սոցիալական ցանցերում կիսվել է օրվա ամենաջերմ եւ ուրախ պահերով՝ հրապարակելով լուսանկարներ եւ տեսանյութեր, որոնք անմիջապես գրավել են երկրպագուների ուշադրությունը:

Լոպեսը հրապարակած կադրերում երեւում է լողավազանի մոտ՝ սպիտակ բիկինիով արեւայրուք ընդունելիս: Նա նաեւ տեսանյութ է տարածել, որտեղ հանգստանում է ջրի վրա լողացող բարձիկի մեջ՝ շրջապատված հարազատներով ու ընկերներով: Աստղը հրապարակումը մակագրել է հետեւյալ խոսքերով. «Օրն անցկացնում եմ այն մարդկանց հետ, որոնց սիրում եմ: Շնորհավոր Մեմորիալ օր բոլորին»:

Տոնական օրը Ջենիֆերի կողքին էին նաեւ նրա երկվորյակ երեխաները՝ Մաքս Մունյիսը եւ Էմմե Մարիբել Մունյիսը, ովքեր արդեն 18 տարեկան են: Հատկապես ջերմ արձագանք է ստացել այն լուսանկարը, որտեղ երգչուհին գրկել է որդուն՝ Մաքսին, իսկ նրանց հետեւում երեւում է ԱՄՆ դրոշը: Ընտանեկան մթնոլորտը եւ մայր ու որդի հարաբերությունների ջերմությունը մեծ հուզմունք են առաջացրել հետեւորդների շրջանում:

Օրվա ընթացքում Լոպեսը ընտրել էր սպիտակ ժանյակավոր եւ բաց կտրվածքներով զգեստ, մինչդեռ Մաքսն ու Էմմեն նախընտրել էին ավելի ազատ եւ առօրյա հագուստ: Սակայն երեկոյի ամենաուրախ պահերից մեկը դարձել է ընկերական երգեցողությունը: Ջենիֆերը եւ նրա մտերիմները միասին կատարել են Բոնի Թայլերի հայտնի «Total Eclipse of the Heart» երգը՝ ստեղծելով անկաշկանդ եւ ուրախ մթնոլորտ:

Հիշեցնենք, որ Ջենիֆեր Լոպեսը երեխաներին ունեցել է նախկին ամուսնուց՝ երգիչ Մարկ Էնթոնիից: Երկվորյակները ծնվել են 2008 թվականի փետրվարին եւ տարիների ընթացքում հաճախ հայտնվել են հանրության ուշադրության կենտրոնում: Լոպեսը բազմիցս նշել է, որ մայր լինելն իր կյանքի ամենակարեւոր եւ պատասխանատու դերերից մեկն է:

Ավելի վաղ տված հարցազրույցներում երգչուհին խոսել էր նաեւ դեռահաս երեխաներ դաստիարակելու դժվարությունների մասին: Նրա խոսքով՝ պատանեկան տարիքում երեխաները սկսում են քննադատել ծնողների յուրաքանչյուր քայլն ու խոսքը, ինչն առանձնապես բարդ է մայրերի համար: «Մի ժամանակ նրանք ուզում էին անընդհատ քեզ հետ լինել, իսկ հետո սկսում են ասել՝ դուրս արի իմ սենյակից»,- կատակով պատմել էր Լոպեսը: Նա նաեւ նշել էր, որ իր եւ մոր դաստիարակության մոտեցումները բավական տարբեր են: Ջենիֆերի խոսքով՝ իր մայրը շատ երիտասարդ տարիքում էր մայր դարձել, մինչդեռ ինքը երեխաներ է ունեցել 38 տարեկանում, երբ արդեն ավելի հասուն եւ կայացած մարդ էր: Այդ պատճառով, ինչպես ասում է երգչուհին, ինքը երեխաների հետ ավելի ազատ եւ ընկերական հարաբերություններ է կառուցել:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 108-ՐԴ ՏԱՐԻՆ Է

Մայիսի 26-ին լրանում է Սարդարապատի հաղթանակի 108 տարին: Սարդարապատի ճակատամարտը տեղի է ունեցել 1918թ. մայիսի 21-29-ը հայկական կանոնավոր զորամասերի, աբխարհազորի եւ Արեւելյան Հայաստան ներխուժած թուրքական զորաբանակի միջեւ:

Սարդարապատի հերոսամարտը հաճախ անվանում են «20-րդ դարի Ավարայր», որը կարեւոր դերակատարում ունեցավ Հայաստանի պատմության մեջ: Հաղթանակը կանգնեցրեց դեպի հյուսիս, արեւելյան տարածքներ եւ Կովկասի ուղղությամբ թուրքական զորքերի էքսպանսիան, կանխվեց հայ ազգի ամբողջական ոչնչացումը եւ հայոց պետականության վերաստեղծման հիմք դրեց:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի տակ տեղի ունեցած հաջողված գործողությունների շնորհիվ եւ այդ ընթացքում հայ զինվորների եւ սպաների, ինչպես նաեւ ժողովրդական զանգվածների ցուցաբերած հերոսությամբ հնարավոր եղավ ոչ միայն դադարեցնել թուրքերի առաջխաղացումը, այլ նաեւ հսկայական կորուստներ պատճառելով նրանց ետ մղել:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Սարդարապատի մասին ասել է. «1915 թվականին, այդ սեւ օրերուն ամբողջ երկիր մը բնաջինջ եղավ, քարուքանդ եղան մեր եկեղեցիներն ու վանքերը եւ ամբողջ ժողովուրդ մը մահվան անդունդե գլորվեցավ անասելի տառապանքներու մեջ:

Սակայն, սիրելի Հայեր, Աստված մեզ բոլորովին չլքեց, եւ ինչպես Քրիստոս երրորդ օրը մեռելներեն հարություն առավ, այնպես ալ Հայ ժողովուրդը երեք տարի հետո հարություն առավ եւ կոչվեցավ նոր կյանքի՝ գրեթե հրաշքի համազոր պայմաններու մեջ: 1915-ի Ապրիլին հաջորդեց 1918-ի Մայիսը: Եվ այնպիսի մեկ պահու, երբ երկրորդ եղեռն մը կսպառնար մեր վերապրող ժողովուրդին՝ Արեւելահայաստանին:Մեր արյունաքամ ժողովուրդի զավակները մեկտեղեցան, բռունցքի մը վերածվեցին անխորտակելի եւ ստեղծեցին ու կոթողեցին Հայոց Պատմության երկրորդ Ավարայրը՝Սարդարապատի ճակատամարտը: Հայ ժողովուրդը փրկվեցավ ստույգ մահե «Յուր քաջ որդոց սուրբ արյունով...»:

Գիտեք՝ այսպիսով հռչակվեցավ Հայաստանի Հանրապետությունը՝Մայիսի 28-ին: Հայոց պատմության անիվը վերջապես շրջվեցավ եւ Հայ ժողովուրդի առջեւ վերջապես բացվեցավ Սարդարապատի հաղթանակով՝ կյանքի նոր ճանապարհ»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌՈՆԱԼԴԻՆՅՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է



Մայիսի 26-ին Երեւան է ժամանել բրազիլացի աշխարհահռչակ լեգենդար ֆուտբոլիստ Ռոնալդինյոն:

ArmLur.am-ին ՀՖՖ-ից տեղեկացրեցին, որ ֆեդերացիան չի հրավիրել նրան, եւ տեղեկություն չունեն, թե ինչ միջոցառման շրջանակներում է նա այցելել Հայաստան: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝Ռոնալդինյոյին Հայաստան է հրավիրել «Vivaro» ընկերությունը: Ֆուտբոլիստը, մեր տեղեկությունների համաձայն, մեկ օր է լինելու Հայաստանում: Հիշեցնենք, որ անցած տարի՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ին, Ռոնալդինյոն այցելել էր Բաքու՝ մասնակցելու Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (COP29) կողմերի համաժողովի 29-րդ նստաշրջանին: Բաքվում ֆուտբոլիստին էին նվիրել Արցախի վիշապագորգի կրկնօրինակը՝ այն ներկայացնելով իբրեւ բնօրինակ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՐԴ «ՄԻԼԱՆՈՒՄ»

Իտալիայի Ա Սերիան ներկայացնող «Միլանը» հայտարարել է գլխավոր մարզիչ Մասիմիլիանո Ալեգրիի պաշտոնանկության մասին: Մասնագետը հեռցվում է զբաղեցրած պաշտոնից այն բանից հետո, երբ առաջնության վերջին տուրում «ռոսոներիները» բաց թողեցին Չեմպիոնների լիգայի ուղեգիր նվաճելու հնարավորությունը՝ մրցաշրջանն ավարտելով 5-րդ հորիզոնականում: Սակայն միլանյան ակումբի ղեկավարությունը որոշել է աշխատանքից ազատել ոչ միայն գլխավոր մարզչին: Անհաջող մրցաշրջանից հետո Ալեգրիի հետ միասին պաշտոններին հրաժեշտ են տալիս նաեւ սպորտային տնօրեն Իգլի Տարեն, գլխավոր տնօրեն Ջորջիո Ֆուրլանին եւ տեխնիկական տնօրեն Ջեֆրի Մոնկադան: Հատկանշական է, որ Իտալիայի առաջնության վերջին տուրի արդյունքներով Չեմպիոնների լիգայի ուղեգիր նվաճեցին «Ռոման» ու «Կոմոն»՝ միանալով «Ինտերին» եւ «Նապոլին»:

Այսպիսով՝ «Միլանն» ու «Յուվենտուսը» հաջորդ մրցաշրջանում կմնան առանց եվրոպական գլխավոր ակումբային մրցաշարի:

● *Խամաճիկների պետական թատրոնում մայիսի 29-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Փոքրիկն ու Կառլսոնը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Գալուստ Սիմոնյան,
64 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Բողոքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ուղարկել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացնել առցանց բողոք:

Բողոքի համար որեւէ հատուկ ձեւ սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը:

Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

Մարդու իրավունքների
պաշտպան

ԷՋԸ՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ են հուշադրամները, եւ ինչո՞ւ կարելի է դրանք ձեռք բերել:

Սուրեն Հակոբյան,
53 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հուշադրամները պատրաստվում են թանկարժեք մետաղներից եւ թողարկվում են հասարակությանը ներկայացնելու երկրի ազգային, միջազգային, պատմական եւ մշակութային, հոգեւոր եւ այլ արժեքները, մետաղի մեջ անմահացնելու այդ արժեքները եւ բավարարելու նումիզմատիկ շուկայի պահանջները: «Նումիզմատ» սրահը նախատեսված է Հայաստանի Կենտրոնական Բանկի թողարկած հուշադրամների, ինչպես նաեւ այլ նումիզմատիկ արժեքների վաճառքի համար: Հայաստանի Կենտրոնական Բանկի թողարկած բոլոր հուշադրամներն ունեն իսկության հավաստագրեր՝ ստորագրված Հայաստանի Կենտրոնական Բանկի նախագահի կողմից, եւ առաջարկվում են իրենց պատյաններում: Այցելուներին տրամադրվում են գեղարվեստորեն ձեւավորված տեղեկատվական թերթիկներ, որոնք պատմում են այն իրադարձության մասին, որին նվիրված է տվյալ հուշադրամը:

ՀՀ Կենտրոնական բանկ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արագածոտնի մարզի Հարթավան գյուղում բեռնատարը բախվել է «Ford Transit»-ին, դիմել փախուստի. կան վիրավորներ: «Ford»-ը վերածվել է մետաղե ջարդոնի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 1 + 5 + 17 + 21
	Կոտայքի լեռներ	+ 1 + 5 + 16 + 20
	Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 + 20 + 23
	Գեղարքունիք	+ 2 + 6 + 17 + 20
	Լոռի	+ 4 + 8 + 20 + 23
	Տավուշ	+ 6 + 9 + 21 + 23
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 + 16 + 19
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 + 19 + 24

	Արարատ	+ 8 + 11 + 20 + 25
	Արմավիր	+ 9 + 12 + 24 + 28
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 16 + 19
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 12 + 23 + 28
	Սյունիքի լեռներ	+ 2 + 5 + 13 + 17
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 16 + 20
	Սյունիքի հովիտներ	+ 11 + 15 + 25 + 29
	Երեւան	+ 10 + 12 + 24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*